

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ կամ ՀՖԿՍՊԻ) ակադեմիական ազնվության դրույթները, սկզբունքներն ու չափանիշները, ակադեմիական անազնվության դրսևորումները և դրանց կանխարգելման միջոցները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողների և նրանց ծնողների դերն ակադեմիական ազնվության ապահովման գործում:

1.2. Սույն Կանոնակարգն ընդունվել է Ինստիտուտի կողմից ակադեմիական ազնվությունը խթանելու նպատակով: Այն մշակված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնադրման մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի (14.07.1967թ.), Մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումները կանխելու նպատակով համագործակցության մասին համաձայնագրի (20.07.1999թ.), ՀՀ Սահմանադրության, Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի (15.06.2006), Տեղեկատվության ազատության մասին օրենքի (23.09.2003), ՀՖԿՍՊԻ կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների հիման վրա:

1.3. Ինստիտուտի ուսանողները, պրոֆեսորադասախոսական, օժանդակ և վարչական կազմը, ինչպես նաև արտաքին շահեկիցները պետք է տեղեկացված լինեն սույն Կանոնակարգին, որն զետեղված պետք է լինի Ինստիտուտի www.asipc.am ինտերնետային կայքում:

2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

2.1. «Ակադեմիական աշխատանք» նշանակում է ցանկացած գործողություն, որը կատարվել է Ինստիտուտի կրթական ծրագրերի և դասընթացների հետ կապված: Ակադեմիական աշխատանքը ընդգրկում է (սակայն չի սահմանափակվում) ատենախոսություններ, քննություններ, բակալավրիատի ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր, ստուգարքներ, հաշվետվություններ, ինքնուրույն, անհատական, լաբորատոր աշխատանքներ, կոլոքվիումներ և գիտական փորձեր, որոնք կատարվում են Ինստիտուտի առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացվող կրթական ծրագրերի շրջանակներում: Այն կարող է լինել գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային:

2.2. **Ակադեմիական ազնվությունն** անհրաժեշտ է դիտարկել որպես մի շարք արժեքների և կարողությունների ամբողջություն, որը նպաստում է յուրաքանչյուրին դառնալու ավելի ազնիվ և ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ դասավանդման, ուսումնառության և գնահատման ընթացքում: Այն հիմնվում է **ազնվության, վստահության, օրինականության, սոցիալական արդարության, թափանցիկության, հրապարակայնության, հարգանքի, պատասխանատվության, որակյալ կրթության, կրթություն առանց կոռուպցիայի, կրթությունն ընդդեմ կոռուպցիայի, էթիկայի կանոնների պահպանման** հիմնարար սկզբունքների պահպանման վրա:

2.3. **Ակադեմիական ազնվություն** նշանակում է կատարել բոլոր ակադեմիական աշխատանքներն առանց շահագրգռվածության, գրագողության, խաբեության, կեղծիքի, ստելու, խարդախության, գողության կամ այլ անձանցից արգելված օգնություն ստանալու և չօգտվել տեղեկատվության ցանկացած արգելված աղբյուրից:

2.4. **Ակադեմիական ազնվություն է համարվում՝**

2.4.1. քննական աշխատանքների անցկացման ընթացքում ազնիվ և պատշաճ պահվածքը,

2.4.2. գիտական և գիտահետազոտական աշխատանքներում մտքերի, գաղափարների իրական հեղինակներին նշելը,

2.4.3. իրական հետազոտական արդյունքներով հիմնավորված աշխատանքի ստեղծումը,

2.4.4. մտավոր սեփականության բոլոր տեսակների պաշտպանումը:

2.5. **Ակադեմիական ազնվությունը նպատակաուղղված է.**

1) կրթության որակի և դասավանդման արդյունավետության բարձրացմանը,

2) ազնվության և անաչառության մթնոլորտ ստեղծելուն,

3) բացառելու ցանկացած անազնիվ վարքագիծ՝ խթանելով սովորողների նկարագրի դրական որակների զարգացումը,

4) ձևավորելու սկզբունքային, մտածող, հետազոտող, բանիմաց և լայնախոհ անհատներ, որոնք կարողանում են համարձակ արտահայտել իրենց մտքերը և հարգանքով են վերաբերվում այլ մարդկանց և նրանց ստեղծած արժեքների հանդեպ,

5) ակադեմիական անազնվության դրսևորումների կանխարգելմանը և դրանց հետ կապված խնդիրների կանոնակարգմանը:

2.6. **Ակադեմիական ազնվությունն** անհրաժեշտ է Ինստիտուտի առաքելության և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման, ազնիվ և փոխադարձ վստահության մթնոլորտի ապահովման, որակյալ կրթական միջավայրի ձևավորման և ծառայությունների տրամադրման համար:

2.7. **Ակադեմիական ազնվության** մթնոլորտ ստեղծելն ու պահպանելն Ինստիտուտի աշխատողների պարտականությունն է: Ինստիտուտի ցանկացած անդամ պատասխանատվություն է կրում աշխատավայրի ներսում ազնվության ստեղծման և պահպանման համար, որը կնպաստի Ինստիտուտի հեղինակության բարձրացմանը:

2.8. **Ակադեմիական անազնվությունը** նշանակում է դիտավորյալ կերպով կատարել, փորձել կատարել կամ օգնել այլ անձանց կատարելու ցանկացած ակադեմիական աշխատանք, որը չի համապատասխանում ակադեմիական ազնվության սույն

սկզբունքներին: Նման գործելակերպը նվազեցնում է ակադեմիական համակարգի արդյունավետությունը և հասարակության մեջ և աշխատանքային գործունեությունում նրա վստահելիությունը:

3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆԸ ԲՆՈՐՈՇ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1. Արգելված վարքագիծ

Ոչ մի ուսանող գիտակցաբար չպետք է կատարի, փորձի կատարել կամ աջակցի այլ ուսանողի կատարել անազնվության ցանկացած գործողություն ակադեմիական աշխատանքի հետ կապված, որը պետք է ներկայացնել ակադեմիական կրեդիտ ստանալու կամ առաջադիմության բարձրացման համար: «Գիտակցաբար» տերմինը, որ գործածվում է նախորդ նախադասությունում, նշանակում է, որ ուսանողը տեղյակ է, որ տվյալ ակադեմիական աշխատանքը ներկայացվելու է ակադեմիական առաջադիմության համար: «Գիտակցաբար» չի նշանակում, որ ուսանողը պետք է տեղեկացված լիներ, որ տվյալ գործողությունը խախտում է Ինստիտուտի ակադեմիական ազնվության քաղաքականությունը: Խախտում համարվող գործողությունը կատարելիս ուսանողը կարող է մտադրություն չունենա տվյալ խախտումը կատարելու: Օրինակ՝ մտադրված կամ չմտադրված կատարված գրագողությունը համարվում է Կանոնակարգի խախտում:

3.1.1. Ակադեմիականան ազնվության օրինակներ

• **Գրագողությունը.** Առանց համապատասխան աղբյուրի վկայակոչման ակադեմիական առաջադիմության համար կատարված աշխատանքի մեջ ընդգրկել բառեր, տերմիններ, գաղափարներ, կարծիքներ կամ տեսություններ, որոնք հեղինակային չեն: Գրագողությունը ընդգրկում է (սակայն չի սահմանափակվում) հետևյալ գործողությունները, որոնք կատարվել են առանց համապատասխան աղբյուրի վկայակոչման.

- 1) առանց չակերտների մեջ բերել այլ անձին պատկանող գրավոր կամ բանավոր խոսքերն ամբողջությամբ կամ մասամբ,
- 2) առանց նշումների կամ մեջբերումների բառափոխկատարել կամ վերապատմել այլ անձին պատկանող գրավոր կամ բանավոր խոսքը,
- 3) ներկայացնել այլ անձին պատկանող գաղափարը, տեսությունը կամ բանաձևը որպես աշխատանքը ներկայացնող անձի բնագիր աշխատանք,
- 4) կրկնել վիճակագրական կամ դեմոգրաֆիական տեղեկությունները, որոնք հեղինակային չեն և սկզբնապես կազմվել են այլ անձի կողմից,
- 5) գնել (կամ այլ կերպով ձեռքբերել) այլ անձի կողմից կատարած աշխատանք կամ այլ առաջադրանք և ներկայացնել որպես ուսանողի ինքնուրույն աշխատանք,
- 6) սխալ հղումներ տալը, երբ ուսանողն իր աշխատանքում «Օգտագործված աղբյուրների ցանկում» ներառում է գիրք, որին ինքն անձամբ չի ծանոթացել և աշխատանքում դրան հղում չի արվել: Այդ ցանկում պետք է տիպաբանական դասակարգում կատարել՝ նշելով միայն աշխատանքում օգտագործված աղբյուրները,

- 7) որևէ աշխատանքի՝ առանց իրական հեղինակին և աղբյուրը նշելու մասնակի կամ ամբողջական ընդօրինակումը, արտագրումը այլևայլ աղբյուրներից, ինչպիսիք են՝ համացանցը, հոդվածները, գրքերը, ամսագրերը և այլն,
- 8) այլ հեղինակների գաղափարների, հետազոտությունների, ուսումնասիրությունների և մտավոր աշխատանքների թեկուզ մասնակի յուրացումը,
- 9) տեղեկատվության հրապարակումը. քննական նյութերի դուրսբերում քննասենյակից, գնահատման գործընթացի մանրամասների հրապարակում և տարածում,
- 10) արգելված միջոցների կիրառումը. քննությունների ընթացքում անթույլատրելի միջոցների, սարքերի, գրականության օգտագործում և փոխանցում,
- 11) հուշարարությունը. ուրիշներին օգնելու նպատակով արտագրության հանդուրժում կամ ապահովում,
- 12) վստահության չարաշահումը. ներկայացնում են սխալ և ոչ ճշգրիտ աղբյուրներ, դասընկերներից և մեծահասակներից արգելված օգնություն ստանալու միտում են դրսևորում:

• Արգելված աջակցությունը. Դասախոսի կողմից արգելված աջակցություն տրամադրել կամ ստանալ ցանկացած քննության կամ այլ ակադեմիական աշխատանքի վերաբերյալ: Քննությունների, ստուգարքների, լաբորատոր աշխատանքների և նմանատիպ գործողությունների ժամանակ ուսանողները պետք է տեղյակ լինեն, որ ցանկացած աջակցությունը (ինչպիսիք են գրքեր, գրառումներ, հաշվիչներ և այլ անձանց հետ խոսակցություններ) արգելված է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այն հատուկ թույլատրված է դասախոսի կողմից: Արգելված վարքի օրինակները ընդգրկում են, սակայն չեն սահմանափակվում.

- 1) արտագրել կամ թույլատրել այլ անձանց արտագրել քննությունների պատասխանները,
- 2) քննության ժամանակ փոխանցել կամ ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են քննվող նյութերին (այդ թվում՝ փոխանցումը կարող է կատարվել բանավոր, գրավոր, նշանների կամ էլեկտրոնային ազդանշանների օգնությամբ կամ այլ կերպ),
- 3) տալ կամ ստանալ ավելի ուշ ժամկետի համար նշանակված քննությունների պատասխանները,
- 4) այլ անձի փոխարեն լրացնել կամ թույլատրել այլ անձին ուսանողի փոխարեն լրացնել ամբողջ առաջադրանքը կամ դրա մեկ մասը (ինչպիսիք են աշխատանքը, վարժությունը, տնային առաջադրանքը, ներկայացումը, հաշվետվությունը, համակարգչային կիրառումը, լաբորատոր փորձը կամ հաշվարկը),
- 5) ներկայացնել խմբակային աշխատանք կամ թույլատրել, որպեսզի աշխատանքը ներկայացվի, երբ խմբի անդամներից ոչ բոլորն են մասնակցել աշխատանքի պատրաստման կամ կատարման ժամանակ,
- 6) կիրառել արգելված ծրագրավորող հաշվիչ կամ այլ էլեկտրոնային սարք:

• Ստելը, խարդախելը կամ կեղծելը, կաշառելը Ցանկացած ակադեմիական աշխատանքի կատարման կամ սույն Կանոնադրության իրականացման հետ կապված

կաշառում կամ ցանկացած կեղծ տեղեկությունների տրամադրում: Այն ընդգրկում է, սակայն չի սահմանափակվում.

- 1) Ակադեմիական աշխատանքի անբավարար կատարման կամ չկատարման դեպքում կեղծ պատճառաբանություններ (նախօրոք կամ փաստից հետո): Օրինակ՝ քննությանը չներկայանալ ու կամ ակադեմիական աշխատանքը չներկայացնելու համար դասախոսին կամ Ինստիտուտի համապատասխան պաշտոնական աշխատակցին տալ կեղծ պատճառաբանություններ,
- 2) Կեղծել ցանկացած լաբորատոր կամ փորձարարական աշխատանքի արդյունքերը կամ ցանկացած տվյալներ և տեղեկություններ,
- 3) Փոփոխել ցանկացած ակադեմիական աշխատանք այն ներկայացնելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, եթե նման փոփոխությունները մտնում են առաջադրանքի պահանջների մեջ (ինչպիսիք են՝ դասախոսի գիտությամբ վերանայել տվյալ ակադեմիական աշխատանքը),
- 4) Փոփոխել գնահատականների, լաբորատոր կամ հաճախելիության գրանցումները: Օրինակ՝ առարկայի համար գրանցման Ինստիտուտի ձևի կեղծում,
- 5) Վնասել համակարգչային սարքավորումները կամ լաբորատոր սարքավորումները ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար, օգտվել այլ անձին պատկանող համակարգչային գաղտնաբառից, վնասել կամ քայքայել ինտերնետային կայքի բովանդակությունը կամ մատչելիությունը, կամ գործել այլ անձի փոխարեն՝ համակարգչային ռեսուրսներ ձեռքբերելու նպատակով,
- 6) Սույն Կանոնակարգի համաձայն կատարվող ցանկացած հետաքննության կամ նիստերի վերաբերյալ տրամադրել կեղծ տեղեկություններ կամ վկայություններ,
- 7) Գնահատականների կամ պատասխանների կեղծում՝ այլ գնահատական ստանալու նպատակով,
- 8) Ակադեմիական գրառումների և/կամ այլ փաստաթղթերի կեղծում՝ ակադեմիական շահ ստանալու նպատակով,
- 9) Այլ սովորողի կամ ակադեմիական աշխատանքի կեղծում և վնասում,
- 10) Արգելված նյութերի կամ էլեկտրոնային հարմարանքների կիրառումը գիտելիքների ստուգման ընթացքում,
- 11) Քննության ժամանակ քննական հարցերի պատասխանների տրամադրումը այլ ուսանողների,
- 12) Կեղծել ցանկացած լաբորատոր կամ փորձնական աշխատանքի արդյունքերը կամ ցանկացած տվյալներ և տեղեկություններ,
- 13) Փոփոխել գնահատականների, լաբորատոր կամ հաճախելիության գրանցումները,
- 14) Ակադեմիական առաջադիմության համար ներկայացնել աշխատանք, որն արդեն նախապես ներկայացվել է (նույնիսկ նույն ուսանողի կողմից), բացառությամբ այն դեպքերի, երբ այն ներկայացվել է աշխատանքը հսկող դասախոսի գիտությամբ կամ լրացնում է նախկինում կատարված աշխատանքին,
- 15) Հավաքագրմանն ընդունելի միջոցներով ստացված տեղեկատվության ներկայացում որպես վավերական, այլ անձ(անց) փոխարեն ներկայացում, այլ անձ(անց) հե-

ղինակության անհիմն չարաշահում: Կազմակերպական պաշտոնական նյութի(երի), կամ փաստաթղթի(երի) դիտավորյալ անօրինական կիրառություն, վնասում, ստորագրություն(ների) կեղծում,

16) Իմանալով ակադեմիականան ազնվության վարքային դրսևորումները՝ թույլատրել, կամ ինչ-որ կերպ աջակցել այլ անձ(անց) դրանք ցուցաբերել,

17) ՀՖԿՄՊԻ կրթական հանրությանը տեղեկատվական կարևոր աղբյուրները չներկայացնելը, քանի որ այդ աղբյուրները տալիս են գիտական և/կամ կրթական առավելություններ նրան, ում համար դրանք հասանելի են՝ չհանդիսանալով նրա մտավոր սեփականությունը:

• **Գողությունը.** Գողանալ, վերցնել կամ մեկ այլ արգելված կերպով ձեռքբերել (օրինակ՝ դուրս հանել պրոֆեսորի գրասենյակից կամ ուսումնասիրել համակարգչային արգելված նյութերը) ակադեմիական ցանկացած աշխատանքին վերաբերյալ տեղեկություններ (ինչպիսիք են՝ քննությունները, գնահատականների գրանցումները, գնահատման ձևերը, գրքերը, աշխատանքները, համակարգչային սարքավորումները և տվյալները, լաբորատոր նյութերը և տվյալները):

• **Համաձայնությունը՝**

- 1) Աշխատանքի անբարեխիղճ կատարմանը աջակցելը,
- 2) Թեստային աշխատանքի, քննության կամ այլ տիպի աշխատանքների (ակնարկ, ռեֆերատ, էսսե, լաբորատոր աշխատանք և այլն) ուրիշի փոխարեն կատարումը կամ ուրիշի աշխատանքի հանձնումը սեփականի փոխարեն,
- 3) Գնահատական ստանալու շուրջ համաձայնությունը ուսանողի և դասախոսի միջև,
- 4) Գնահատական ստանալու նպատակով դասախոսին միջնորդելը (օրինակ դասախոսի, կոլեգայի միջոցով),
- 5) Գնահատականը ստանալու նպատակով ղեկավարի միջնորդությունը:

• **Բազմապատճենումը՝**

- 1) Նույն աշխատանքը որպես տարբեր առաջադրանքներ կամ տարբեր վերնագրերով ներկայացնելը,
- 2) Միևնույն աշխատանքը տարբեր տիպի գնահատումների համար ներկայացնելը, այդ թվում՝ որևէ աշխատանքի, որը երբևէ արդեն գնահատված կամ ներկայացված է եղել, մասնակի կամ ամբողջական կրկնությունը՝ նույնիսկ եթե այն հենց հեղինակինն է և գրագողություն չի ենթադրում:

• **Ցանկացած այլ գործողություն,** որն անարդար ձևով առավելություն է տալիս աշխատակցին կամ ուսանողին և ազդում նրա արձանագրած արդյունքների վրա: Ակադեմիական անազնվություն համարվող ցանկացած այլ վարք արգելվում է, նույնիսկ՝ եթե այն հատուկ կերպով նշված չէ վերոնշյալ օրինակների ցուցակում:

3.2. Պահանջվող վարքագիծ

Համաձայն սույն Կանոնակարգի՝ Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական, օժանդակ և այլ սպասարկող բաժնի և ուսանողական կազմի ցանկացած անդամ, որը տեղեկացված է սույն քաղաքականության խախտումների մասին, պարտավոր է տեղյակ պահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին խախտումների վերաբերյալ:

Պահանջվող վարքը ընդգրկում է (սակայն չի սահմանափակում) խախտում կատարած ուսանողի հետ քննարկումներ վարելը, հարցերին ճիշտ պատասխաններ տալը և ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող հանձնաժողովին փաստաթղթեր տրամադրելը:

3.2.1. Պրոֆեսորադասախոսական կազմ

Սույն Կանոնակարգը ապահովում է Ինստիտուտում տեղի ունեցած ակադեմիական անազնվության դեպքերի ուսումնասիրության բացառիկ ընթացակարգը: Ըստ սույն Կանոնակարգի՝ դասախոսական կազմը պարտավոր է տեղյակ պահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին խախտումների վերաբերյալ: Պրոֆեսորադասախոսական կազմը պարտավորություն է ստանձնում միջոցներ ձեռնարկել և տեղեկացնել ուսանողներին ակադեմիական ազնվության կանոնների խախտման վերաբերյալ, որոնք վերաբերվում են ակադեմիական աշխատանքին և ակադեմիական աջակցությանը: Ի լրացում, յուրաքանչյուր դասախոս պետք է սատարի ակադեմիական ազնվության մթնոլորտը: Դասախոսի կողմից սույն պարտավորությունները չկատարելը չի կարող արդարացում համարվել ուսանողի դեմ ուղղված ակադեմիական անազնվության մեղադրանքին:

3.2.2. Ուսանողներ

Ինստիտուտի ուսանող համարվելը նրա կողմից համաձայնություն է հանդիսանում ենթարկվել սույն սկզբունքներին և կանոնակարգին: Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է տեղեկանալ սույն փաստաթղթով սահմանված պայմաններին: Եթե ուսանողը խախտել է սույն քաղաքականության պայմանները, պայմաններին տեղյակ չլինելը չի ազատում պատասխանատվությունից:

4. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

4.1. Այն ուսանողը կամ դասախոսը, ում ժամանակավոր կամ ընդմիջտ հեռացրել են Ինստիտուտից, կարող է բողոքարկել Ինստիտուտի ռեկտորին:

4.2. Այն ուսանողը, որը կրել է մեղմ պատիժ, կարող է խնդրագիր ներկայացնել ռեկտորին դեպքը վերանայելու համար: Ռեկտորի կողմից նման դեպքերի վերանայումը չի հանդիսանում իրավունքի հարց, սակայն մնում է ռեկտորի հայեցողությանը:

4.3. Սույն Կանոնակարգը խախտող ուսանողը կարող է բողոքարկել՝ հիմնվելով մեկ կամ երկու հետևյալ պատճառների վրա.

- 1) ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող հանձնաժողովը որոշել է, որ դասախոսը չի կարողացել ապացուցել ուսանողի խախտումը՝ հիմնվելով զեկուցագրի տվյալների վրա,
- 2) պատիժը չափից ավելի խիստ է,
- 3) սույն քաղաքականության համաձայն ուսանողին զրկել են իր իրավունքներից և մերժումը փաստացի ազդել է որոշման վրա,
- 4) նոր կամ լրացուցիչ վկայություն է հայտնաբերվել ակադեմիական ազնվության հանձնաժողովի հանդիպումից հետո:

4.4. Բողոքարկումը կամ խնդրագիրը պետք է գրվի և ստորագրվի ուսանողի կողմից և ընդգրկի բողոքարկման պատճառները և փաստերը: Այն պետք է ներկայացվի Ինստիտուտի ռեկտորին ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող հանձնաժողովի

կողմից կայացված վերջնական որոշման մասին ուսանողին տեղյակ պահելուց հետո հինգ օրվա ընթացքում:

4.5. Ինստիտուտի ռեկտորի որոշումը պետք է տեղյակ պահվի և՛ ուսանողին, և՛ խախտումը արձանագրող դասախոսին: Որոշումը ներկայացվում է գրավոր և ընդգրկում է որոշման կայացնելու համար հիմքեր: Ռեկտորի կողմից կայացված ցանկացած վերջնական որոշում պետք է բողոքարկվի Ինստիտուտի կողմից սահմանված կարգով:

5. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.1. Ինստիտուտի դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- 1) Մշակել և հաստատել ակադեմիական ազնվության Կանոնակարգը,
- 2) Ապահովել փաստաթղթի հասանելիությունը շահակիցների հանրությանը. ուսանողներին տեղեկացնել ակադեմիական ազնվության Կանոնակարգի դրույթների մասին,
- 3) Պարբերաբար կազմակերպել սեմինարներ և քննարկումներ ինստիտուտի շահակիցների /ուսանողներ, դասախոսներ, ծնողներ, մարզիչ, խորհրդատու/ հետ՝ ակադեմիական ազնվության վերաբերյալ,
- 4) Ապահովել և ձևակերպել ակադեմիական ազնվության ապահովման համար անհրաժեշտ պայմաններ և երաշխավորություններ,
- 5) Ստեղծել ակադեմիական ազնվության պահպանմանը նպաստող մթնոլորտ: Սովորողի նկարագրի որակների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքում պարբերաբար հղում կատարել ակադեմիական ազնվության բովանդակությանը,
- 6) Յուրաքանչյուր քննական շրջանից առաջ ուսանողներին և դասախոսներին տեղեկացնել թույլատրելի պարագաների ցանկի մասին /պաստառներ, աղյուսակներ, գծապատկերներ և այլ ձևերով/,
- 7) Կարևորել դեկանատների, ամբիոնների, Մագիստրատուրայի բաժնի, արխիվի և գրադարանի դերն ակադեմիական ազնվության ձևավորման գործընթացում:

5.2. Դասախոսի դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- 1) Մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի ստեղծման, մշակման և վերանայման գործընթացին,
- 2) Սովորողների մոտ կարևորել խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, հետազոտություններ անելու և տեղեկատվական գրագիտության հմտություններ ձեռք բերելու կարևորությունը,
- 3) Սեփական օրինակով ձևավորել և զարգացնել ակադեմիական ազնվության կանոնները պահպանելու և դրանց հետևելու կարողություններ,
- 4) Ուսումնասիրել հեղինակային իրավունքին առնչվող հարցերը, սովորեցնել ուսանողներին կատարել ճշգրիտ հղումներ, ինքնուրույնաբար, սեփական բառերով ձևակերպել և արտահայտել իր և այլ մարդկանց մտքերը և գաղափարները,
- 5) Յուրաքանչյուր գնահատվող առաջադրանքից առաջ սաներին ներկայացնել թույլատրելի էլեկտրոնային սարքավորումների, բանաձևերի և գրքերի ցանկը,
- 6) Հետևողականություն դրսևորել ակադեմիական անազնվության դրսևորումների հանդեպ,

- 7) Մասնակցել ակադեմիական ազնվության վերաբերյալ քննարկումներին, դասընթացներին,
- 8) Ակադեմիական ազնվության վարքագծի դրսևորման օրինակ դառնալ. ապահովել բազմաբնույթ առաջադրանքների և տարբերակների ստեղծումը՝ բացառելով նույն առաջադրանքը երկրորդ անգամ կիրառելու միտումից:

5.3. Ուսանողի դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- 1) Գիտենալ ակադեմիական ազնվության քաղաքականության դրույթները,
- 2) Իրազեկ լինել, հարգանք դրսևորել և պահպանել այլ մարդկանց մտավոր սեփականությանը առնչվող հիմնարար պահանջները,
- 3) Ցանկացած աշխատանք կատարելիս ընդունել և խստորեն հետևել էթիկական չափանիշներին
- 4) Այլ հեղինակների աշխատություններից հատվածներ օգտագործելիս անպայման ներկայացնել որպես ուրիշի ուղակի խոսք: Մեջբերումներ անելուց հետո ձևակերպել եզրակացություններ, որոնք բացառապես սեփական մտքի ընթացքի արդյունքն են,
- 5) Հետազոտական աշխատանք, ռեֆերատ կամ հոդված գրելիս օգտագործել հղումներ, որոնցում նշվում են հեղինակը, աշխատությունը և որտեղից է վերցված մտքերը,
- 6) Աշխատանքի վերջում պարտադիր ունենալ մատենագրություն, որտեղ նշված լինեն բոլոր տեղեկատվական աղբյուրները,
- 7) Յուրաքանչյուր քննությունից առաջ տեղեկանալ տպագիր և էլեկտրոնային գրականության, սարքավորումների, գծապատկերների, աղյուսակների թույլատրելի ցանկն:
- 8) Իրազեկ լինել ակադեմիական անազնվության դրսևորման արդյունքում պատասխանատվության կրելու մասին,
- 9) Ուսանողական խորհուրդի կազմում մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի վերանայման գործընթացին:

5.4. Ծնողների դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- 1) Տեղյակ լինել ակադեմիական ազնվության փաստաթղթերին,
- 2) Խրախուսել երեխաներին ակադեմիական ազնվություն դրսևորելիս և հակառակը,
- 3) Մասնակցել ակադեմիական ազնվությանն առնչվող քննարկումներին՝ առաջադրելով իրենց կարծիքները և առաջակությունները:

6. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 6.1. ՀՖԿՍՊԻ ֆակուլտետների դեկանները յուրաքանչյուր նոր աշխատակցի կամ ուսանողի ծանոթացնում են սույն կարգի հետ, ներկայացնում են ակադեմիական ազնվության չափանիշները և դրանց խախտման հետևանքները, զգուշացնում են, որ ակադեմիական անազնվություն դրսևորելը պատժելի է:
- 6.2. Դեկաններն ուսանողներին և աշխատակիցներին ներկայացնում են ակադեմիական անազնվության տարաբնույթ դրսևորումները ու նրանց բնորոշող վարքային հիմնական դրսևորումները:

6.3. Դեկանները յուրաքանչյուր նոր աշխատակցի, կամ ուսանողի տեղեկացնում են, որ ՀՖԿՍՊԻ-ում ակադեմիական ազնվության շուրջ մանրամասն տեղեկատվություն և/կամ խորհրդատվություն ստանալու համար նրանք կարող են դիմել ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժնի և Կարիերայի բաժնի աշխատակիցներին:

6.4. Ուսանողների և աշխատակիցների հետ կնքվող պայմանագրերում ներառվում է առանձին կետ, համաձայն որի նրանք տեղեկացված են ակադեմիական ազնվության սույն կարգի դրույթներին և դրանք խախտելու դեպքում կարող են ենթարկվել պատասխանատվության:

6.5. Ակադեմիական ազնվության խախտման դեպքում՝

1) սովորողը հանդիպում է ունենում ամբիոնի վարիչի, դեկանի և հարկ եղած դեպքում ռեկտորի հետ,

2) կազմակերպվում է հանդիպում սովորողի ծնողի հետ ,

6.6. Համաձայն ՀՖԿՍՊԻ ներքին կարգապահական կանոնների ուսանողը հեռացվում է ինստիտուտից ակադեմիական ազնվության վարքականոնների խախտման, մասնավորապես ընթացիկ և եզրափակիչ քննությունների կամ ստուգարքների ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման կամ ցանկացած այլ մեթոդով կատարած արտագրության, արտագրության փորձի և սղագրության հայտնաբերման դեպքում՝ քննություն ընդունող դասախոսը դադարեցնում է տվյալ ուսանողի քննությունը, նրան հեռացնում է քննասենյակից:

6.7. Ուսանողը, ակադեմիական անազնվություն դրսևորելու պարագայում, կարող է կրկնել դասընթացը, մնալ նույն կուրսում, վաթարագույնը հեռացվել ինստիտուտից:

6.8. Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների կամ ինստիտուտի այլ աշխատակիցների կողմից ակադեմիական ազնվության սկզբունքների խախտման կամ անազնվության դրսևորման դեպքերը քննարկվում են ինստիտուտի էթիկայի հանձնաժողովում՝ այդ հանձնաժողովում հարցերի քննարկման ընթացակարգով:

6.9. Ե՛վ ուսանողին, և՛ ՀՖԿՍՊԻ այլ ներկայացուցիչների տրվում են գրավոր նկատողություն, որոնցում հստակ նկարագրվում է նրանց կողմից դրսևորած անազնիվ վարքը: Յուրաքանչյուր գրավոր նկատողության ներքևում ստորագրում է անազնիվ վարք դրսևորած անձը՝ հաստատելով, որ դրանում առկա նկարագրությունը ճշմարիտ է: Երեք գրավոր նկատողություն ունեցող ՀՖԿՍՊԻ կրթական համայնքի յուրաքանչյուր ներկայացուցիչ կարող է հեռացվել Ինստիտուտից:

7. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Սույն կանոնակարգը հաստատում է ՀՖԿՍՊԻ գիտական խորհուրդը:

7.2. Կանոնակարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ՝

- 1) ռեկտորի,
- 2) գիտական խորհրդի անդամների,
- 3) ուսանողական խորհրդի,
- 4) որակի ապահովման հանձնաժողովի առաջարկությամբ: